

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԼՈՒՌԻ ՄԱՐԶ

ՔԱՐԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ

2017-2021 թթ. ՍՈՑԻԱԼ ՏՆՏԵՍԱԿԱՆ  
ԶԱՐԳԱՑՄԱՆ

ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱԳԻՐ

Կազմեց համայնքի ղեկավար



Արա Մատինյանը

Քննարկվել և հաստատվել է Քարաձոր համայնքի ավագանու  
2016թ-ի դեկտեմբերի 19-ի նիստի թիվ 20 որոշմամբ

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Համայնքի ղեկավարի ողջույնի խոսք

2. Համայնքի իրավիճակի նկարագրություն

2.1. Համայնքի ընդհանուր նկարագրություն

2.2. Համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակը

2.3. Համայնքում իրականացվող ծրագրերը

2.4. Համայնքի ֆինանսական իրավիճակի նկարագրություն և ֆինանսական կանխատեսումները

2.5. Ձարգացման խոչընդոտներ և դժվարություններ

2.6. Համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների (ՈԻԹՅՍ) վերլուծություն


3. Նպատակների սահմանում և գործողությունների պլանավորում

3.1. Համայնքի զարգացման տեսլական

3.2. Համայնքի զարգացման անմիջական նպատակներ

4. ՀՀԶԾ ֆինանսավորում

5. Մոնիթորինգ



## 1. ՔԱՐԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔ

Սիրով ողջունում են Քարածոր համայնքի ազգաբնակչությանը և բոլոր նրանց, ովքեր հետաքրքրված են Քարածոր համայնքի անցուդարձով, կատարվող ծրագրերով, այս հնգամյա ծրագրով նախատեսված ծրագրերի իրականացումով, որոնք վեր են հանվել բազմաթիվ քննարկումների ընթացքում:

Հուսով են, որ սատար կկանգնեք, որպեսզի կարողանանք իրականացնել մեր առջև դրված խնդիրները, համայնքը դարձնել բարեկեցիկ և զարգացած համայնք:

Կանխավ շնորհակալ են բոլոր այն գործարարներին, համայնքաբնակներին և շահագրգիռ կազմակերպություններին և անհատներին, որոնք կօգնեն համայնքի զարգացման ծրագրերի իրականացմանը, հասարակական կյանքի ակտիվացման գործընթացներին:

### **Գալիք հիանգ տարում համայնքի զարգացման ծրագրային հիմնական ուղղություններն են**

Բարելավել համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական իրավիճակը  
 Համայնում զարգացնել գյուղատնտեսությունը  
 Հատուկ ուշադրություն դարձնել կրթությանը, մծակույթի զարգացմանը  
 Միջոցներ ձեռնարկել համայնքի սոցիալապես անապահով խավերի  
 Սոցիալական պայմանների բարելավման ուղղությամբ  
 Բարելավել համայնքի ֆինանսական կարողությունը  
 Նպատակային օգտագործել համայնքային բյուջեի միջոցները  
 Բարձրացնել բնակչությանը մատուցվող ծառայությունների և սպասարկումների մակարդակը  
 Ստեղծել նոր աշխատատեղեր

### **Համայնում առկա հիմնախնդիրները**

Բնակչության սոցիալապես անապահով վիճակ  
 Առկա գյուղատնտեսական տեխնիկայի մաշվածություն  
 Ոչ ճիշտ օգտագործման արդյունքում ուժասպառված հողեր  
 Խմելու ջրի արտաքին և ներքին ցանցերի մաշվածություն

Հանդամիջյան ճանապարհների անմխիթար վիճակ  
Աշխատատեղերի բացակայություն  
Հանդիսությունների սրահի շենքի բացակայություն  
Գիշերային լուսավորության անցկացում համայնքի ոչ կենտրոնական  
Փողոցներում

### **Լուծման ուղիները**

Լրացուցիչ ֆինանսական միջոցների ներկրում  
Աշխատատեղերի ստեղծում  
Օրենքների փոփոխություններ  
Հանրային մասնակցություն  
Կոոպերատիվների ստեղծում և ընդլայնում  
Համագործակցություն միջազգային և հասարակական կազմակերպու-  
թյունների հետ  
Իրավագիտական ծառայությունների մատուցում

Համայնքի զարգացման հնգամյա ծրագիրը մշակվել է ղեկավարվելով  
Հայաստանի Հանրապետության օրենքներով, Հայաստանի  
Հանրապետության կառավարության որոշումներով և օրենսդրական այլ  
ակտերով:

Այն մշակվել է համայնքի ղեկավարի, աշխատակազմի, ավագանու,  
բնակչության, հանձնաժողովների և ՀԿ-ների կողմից արված  
առաջարկությունների և քննարկումների հիման վրա, որը հաստատվել է  
ավագանու կողմից և դրվում է գործողության մեջ:

## 2. Համայնքի իրավիճակի նկարագրություն

### 2.1. Համայնքի ընդհանուր նկարագրություն

Քարածոր գյուղը գտնվում է Լոռու մարզում, Սպիտակի նախկին շրջանի վարչական տարածքում՝ Փամբակ գետի միջին հոսանքի ձախակողմյա հովտում: Գյուղը սահմանակից է Գուրսալի, Նոր-Խաչակապ, Արջուտ և Արևաշող գյուղերին: Գյուղի մոտակայքով են անցնում Երևան-Վանաձոր հանրապետական մայրուղին և Գյումրի-Այրում երկաթուղին:

Գյուղը հիմնադրվել է 1830 թվականին: Ծովի մակերևույթից այն բարձր է 1550 մետր , վարչական տարածքը կազմում է 1609 հա, որից գյուղի բնակատեղը՝ 38 հա: Կլիման մեղմ է, տեղումները՝ քիչ:

Գյուղը գտնվում է 10 բալանոց սեյսմիկ գոտում: 1988 թվականի երկրաշարժի հետևանքով գյուղը հիմնովին ավիրվեց:

### Համայնքի հողատարածքը

	ՀՀ Լոռու մարզի Քարածոր համայնքի հիմնական հողային ռեսուսները	հա
1.	Համայնքի վարչական սահմաններում ընդգրկված հողերի ընդհանուր մակերեսը որից	1609.67
2.	Գյուղատնտեսական նշանակության հողեր	1331.49
3.	Բնակելի շինությունների տակ հողեր	32.61
4.	Արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական հշանակության հողեր	6.22
5.	Ճանապարհների տակ հողեր	1.26
6.	Պատմամշակութային հողեր	12.04
7.	Անտառային հողեր	201.61
8.	Ջրային հողեր	6.89
9.	Այլ	17.55

## ԺՈՂՈՎԱՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1. Համայնքի մշտական բնակչության ընդհանուր թիվը	468
. տղամարդ	231
. կին	237
. նախադպրոցական տարիքի (0-6 տարեկան)	31
. դպրոցական տարիքի (7-17 տարեկան)	79
. միջին տարիքի (18-62 տարեկան)	300
. 63 տարեկանից բարձր	58
. տնային տնտեսությունների բվաքանակը	140
. գրանցված ընտրողների թիվը	328

### *Բնակչության սոցիալական կազմը*

1. Կենսաթոշակառուներ, որոնցից`	70
հաշմանդամներ (1-ին, 2-րդ, 3-րդ խմբի)	21
միակողմանի ծնողազուրկ երեխաներ	3
երկկողմանի ծնողազուրկ երեխաներ	-
մանկուց հաշմանդամ երեխաներ	1
միայնակ կենսաթոշակառուներ	22
գոհված ազատամարտիկների ընտանիքներ	-
2. Պատերազմի մասնակիցներ, վետերաններ, որոնցից`	-
ՀՀ սահմանների պաշտպանության ժամանակ վիրավորված ազատամարտիկներ (1-ին, 2-րդ, 3-րդ խմբի)	-
3. Փախստականներ (մարդ)	-
4. Բռնադատվածներ	-
5. Բազմազավակ ընտանիքներ (3 և ավելի անչափահաս երեխա ունեցող)	5
6. Սոցիալական ծառայությունների Սպիտակի տարածքային գործակալության արքատության ընտանեկան համակարգում հաշվառված ընտանիքների թիվը (միջինը), այդ թվում`	
ընտանեկան նպաստ ստացող ընտանիքների թիվը	34
միանվագ դրամական օգնություն ստացողների թիվը (միջինը)	6

## 2.2 Համայնքի սոցիալ տնտեսական իրավիճակը

Համայնքի ընդհանուր տարեկան բյուջեն կազմում է XXXX հազ.դրամ:

Ընդհանուր եկամուտների մեջ համայնքի սեփական եկամուտների

բաժինը կազմում է հազ. դրամ:

Համայնքն ունի հիմնական դպրոց, որում սովորում են 23 աշակերտներ: Աշակերտները այնուհետև ուսումը շարունակում են հարևան Ղուրսալի գյուղի և Սպիտակ քաղաքի ավագ դպրոցներում: Դպրոցը չունի լաբորատորիաներ, շենքը հիմնանորոգված է, ունի սպորտդահլիճ: Դպրոցն ունի 19 աշխատատեղ, որից 12-ը ուսուցիչներ են:

Համայնքը չունի մշակույթի տուն, գրադարանի շենք:

Համայնքում կա ֆուտբոլի մեկ հարմարեցված խաղադաշտ:

Համայնքում չկա հոգևոր դատիարակության կենտրոն:

Համայնքում գործում է մեկ բուժկետ: Ազգաբնակչության բուժսպասարկմամբ զբաղվում է մեկ բուժքույր:

Համայնքում գործում է երկու խանութ:

Համայնքը համարվում է գյուղատնտեսական`

Դաշտավարություն

Անասնապահություն

Արտադրվող հիմնական գյուղատնտեսական մթերքներն են`

ցորեն, գարի, կարտոֆիլ, բանջարեղեն

Անվանում	հեկտար	Մեկ հեկտարից ստացվող միջին բերքը տոննա	Իրացման շուկա
Ցորեն	58	3.1	ՀՀ շուկա
Գարի	40	2.8	ՀՀ շուկա
Կարտոֆիլ	16	0.93	ՀՀ շուկա

Անասունների տեսակը	Գլխաքանակը
Խոշոր եղջերավոր անասուններ	211
Այդ թվում կովեր	39
Մանր եղջերավոր անասուններ	86
Այդ թվում մայրեր	65
Խոզեր	66
Այդ թվում մայրեր	13
Թռչուններ	247
Այդ թվում հավեր	198
Մեղվաբնիկներ	50

### 2.3 Համայնում իրականացվող ծրագրեր

Համայնքի վարչական տարածքում պետության կողմից գալիք հինգ տարիների համար նախատեսվող ծրագրերն անհայտ են:



## 2.4. Համայնքի ֆինանսական իրավիճակի նկարագրություն

### ֆինանսական կանխատեսումները

N	Եկամտի տեսակը	2017	2018	2019	2020	2021
	Ընդամենը եկամուտներ	10006.8 հազ	10210.0 հազ	10460.0 հազ	10710.0 հազ	11060.0 հազ
Ա	Հարկային եկամուտներ	1860 հազ	1910.0 հազ	1960.0 հազ	2010.0 հազ	2060.0 հազ
1	Հողի հարկ	1072 հազ	1072 հազ	1072 հազ	1072 հազ	1022 հազ
2	Գույքահարկ	400.0 հազ	450.0 հազ	500.0 հազ	550.0 հազ	600.0 հազ
3	Եկամտահարկ					
4	Այլ հարկային եկամուտներ					
Բ	Տուրքեր					
1	Պետական տուրքեր					
2	Տեղական տուրքեր	198.0 հազ	198.0 հազ	198.0 հազ	198.0 հազ	198.0 հազ
Գ	Ոչ հարկային եկամուտներ					
1	Վարձավճարներ	190.0 հազ	190.0 հազ	190.0 հազ	190.0 հազ	190.0 հազ
3	Տեղական վճարներ					
4	Այլ ոչ հարկային եկամուտներ					
Դ	Դոտացիա	8146.8 հազ	8300 հազ	8500 հազ	8700 հազ	9000 հազ
Ե	Եկամուտներ կապիտալ գործառնություններից					
Զ	Տարեսկզբի ազատ մնացորդ					

## 2.5. Զարգացման խոչընդոտներ և դժվարություններ

Քարածոր համայնքի առջև ծառայած ընդհանուր հիմնական խնդիրներն են՝

Համայնքի բնակչության 65%-ը գտնվում են սոցիալապես անապահով պայմաններում: Համայնքում առկա է զանազան հիվանդությունների վտանգ: Համայնքի զարգացման հիմնական խոչընդոտող գործոններն ու դժվարությունները նշված են ստորև.

1) Գործարար միջավայրի բարելավմանը և ձեռնարկատիրության խթանմանը խոչընդոտող գործոններն են՝

- .ժամանակակից տեխնոլոգիաների կիրառման դժվարությունը,
- .բնակչության գործարար ոլորտի գիտելիքների պակասը,
- .ֆինանսի բացակայությունը
- .Համայնքի գույքի կառավարման խոչընդոտներն են՝
- .Ֆինանսական սղությունը,

2) Նախադպրոցական կրթության կազմակերպման խոչընդոտներն են ծնողական ներդրումների դժվարությունները,

3) Երիտասարդության ներգրավմամբ ակտիվ մշակութային և մարզական կյանքի կազմակերպման խոչընդոտող գործոններն են՝

- .մշակութային կյանքի պասիվությունը,

4) Համայնքի բնակչության սոցիալական պաշտպանությանը խոչընդոտող գործոններ են՝

- .գործազրկությունը,
- .խմելու ջրի անորակությունը,
- .խմելու ջրի անհավասարաչափ բաշխումը,

5) Ֆիզիկական կուլտուրայի և առողջ ապրելակերպի խրախուսմանը խոչընդոտող գործոններն են՝

- .սպորտհրապարակ, մարզադահլիճ և մարզագույք չունենալը,

6) Համայնքում բնակարանային շինարարության խթանմանը խոչընդոտող գործոններն են՝ .համայնքաբնակների աղքատությունը,

7) Համայնքի բնակավայրերի կառուցապատմանը, բարեկարգմանը և կանաչապատմանը, համայնքի աղբահանությանը և սանիտարական մաքրմանը, կոմունալ տնտեսության աշխատանքների ապահովմանը,

ինչպես նաև համայնքային գերեզմանատան պահպանմանը և գործունեության ապահովմանը խոչընդոտող գործոններն են՝

- .ջրմուղ-կոյուղու բացակայությունը,
- .խմելու ջրագծի և ջրի ներքին ցանցի քայքայված վիճակը,
- .միջոցների սղությունը,
- .փողոցային լուսավորության մասնակի բացակայությունը,

8) Համայնքի հասարակական տրանսպորտի աշխատանքի կազմակերպմանը, համայնքային ճանապարհային ենթակառուցվածքների պահպանմանը և շահագործմանը խոչընդոտող գործոններն են՝

- .ներհամայնքային որոշ ճանապարհների և դաշտամիջյան ճանապարհների քայքայված վիճակը,
- .հանրային տրանսպորտի անբավարար վիճակը,

9) Պետության պաշտպանության իրականացման աջակցմանը խոչընդոտող գործոններն են՝

- .հայրենասիրական, պետական մտածողության պակասը,
- .գյուղաբնակների ամենօրյա զբաղվածությունը,
- .տրանսպորտային միջոցների անսարք վիճակը,

10) Աղետներ իռիսկերի նվազեցման և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության ու քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացմանը խոչընդոտող գործոններն են՝

- .քաղաքացիական պաշտպանության գիտելիքների պակասը,
- .սեյսմիկ գոտում գտնվելը,
- .պարզագույն թաքստոցների և քաղաքացիների անհատական պաշտպանության միջոցների բացակայությունը,
- .ազդանշանային սարքերի բացակայությունը,
- .համայնքաբնակները պատրաստ չեն համապատասխան քայլերի դիմել վերահաս և փաստացի վտանգի դեպքում.

11) Գյուղատնտեսության զարգացման խթանմանը խոչընդոտող գործոններն են՝

- .գյուղատնտեսական տեխնիկայի մաշվածությունը,
- .ժամանակակից տեխնիկայի և տեխնոլոգիաների բացակայությունը,

12) Համայնքում շրջակա միջավայրի պահպանությանը խոչընդոտող գործոններն են՝

- .հեղեղատարների բացակայությունը,
- .գիտակցական մակարդակի ոչ բարվոք վիճակը,

13) Զբոսաշրջության զարգացման խթանմանը խոչընդոտող գործոններն են՝

- .գովազդի բացակայությունը,
- .տուրիստական գործակալությունների հետ կապ չունենալը,

14) Համայնքի երիտասարդության խնդիրների լուծմանն ուղղված ծրագրերի և միջոցառումների կազմակերպմանը խոչընդոտող գործոններն են՝

- .գործարար միջավայրի բացակայությունը,
- .ձեռնարկությունների բացակայությունը,
- .երիտասարդների միգրացիան,

15) Համայնքում ծնելիության և բազմազավակության խթանմանը խոչընդոտող գործոններն են՝

- .երիտասարդների չամուսնանալը,
- .երիտասարդ ընտանիքների սոցիալապես պաշտպանված չլինելը,
- .պետության կողմից աջակցության պակասը, աղքատությունը,

16) Համայնքում բնակչության առողջության պահպանման և բարելավման ծրագրերի իրականացմանը, արդյունավետ և մատչելի բժշկական սպասարկման պայմանների ստեղծմանը խոչընդոտող գործոններն են՝

- .բնակչության իրազեկվածության պակասը,
- .բուժ-գործիքների պակասը,
- .նեղ մասնագիտությամբ բժիշկների համայնքներ չհաճախելը,
- .անվճար բուժ սպասարկման քիչ լինելը,

17) Համայնքային հասարակական կյանքին հաշմանդամների մասնակցության խթանմանը խոչընդոտող գործոններն են՝

- .համայնքում համապատասխան պայմաններ չունենալը,

18) Համայնքում առկա ազգային և համամարդկային արժեքներին յուրաքանչյուրի ազատ հաղորդակցմանը նպաստելուն խոչընդոտող գործոններն են՝

.հեռահաղորդակցման տեխնոլոգիաների գիտելիքների պակասը,  
.ինտերնետ կապի անորակությունը,

.տեխնոլոգիաների անհասանելիությունը որոշ ընտանիքներին,

19) Համայնքում մշակութային, կրթական, գիտական,

առողջապահական, մարզական, սոցիալական և այլ հաստատությունների հիմնադրման, ֆինանսավորման, ինչպես նաև դրանց ֆինանսական անկախության ապահովման նպատակով բարեգործության խթանմանը խոչընդոտող գործոններն են՝

.համայնքի երիտասարդների կամավորության պակասը,

.հանրային համախմբվածության և մասնակցության թույլ լինելը,

.տեղեկատվական տեխնոլոգիաներին չտիրապետելը:

#### ՀԱՄԱՅՆՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՊՐՈԲԼԵՄՆԵՐԸ ԾՆՈՂ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

Գյուղացիները գտնվում են սոցիալապես վատ պայմաններում, քանի որ՝  
ա/ հաճախակի են լինում երաշտի կամ կարկտաբեր տարիներ, որից գյուղացիները կորցնում են բերքի 50%-ը,

բ/ նրանք բավարարված չեն ոռոգման ջրով, իսկ նրանց ապրուստի հիմնական միջոցն ստացվում է բանջարա-բոստանային մշակաբույսերից,

գ/ հնարավորություն չունեն որակյալ սերմեր և վառելանյութ ձեռք բերելու,

դ/ գյուղացին համայնքի պրոբլեմները իր սեփականը չի համարում,

ե/ գյուղացին չի կարողանում իրացնել իր արտադրանքը,

զ/ գյուղացին չի կարողանում կատարել իր հարկային պարտավորությունները

է/ գործազրկության պատճառով երիտասարդները մեկնում են արտագնա աշխատանքների:

### **2.6 Համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների (ՈւԹՀՍ) վերլուծություն**

#### **Ուժեղ կողմերը**

1.Գյուղի աշխարհագրական դիրքը

- 2.Երևան- Վանաձոր մայրուղու մոտիկությունը
- 3.Վանձոր և Սպիտակ քաղաքների մոտիկությունը
- 4.Գազաֆիկացված է 90%-ով
- 5.Ոռոգման ջրի ինքնահոս ցանցի առկայությունը
- 6.Խմելու ջրի արտաքին և ցանցի առկայությունը
- 7.Ընդարձակ խոտհարքների և արոտավայրերի առկայությունը
- 8.Բավարար հեռախոսակապը
- 9.Աղբահանության առկայությունը

### **Թույլ կողմերը**

- 1.Զբաղվածության ցածր մակարդակը, աշխատատեղերի պակասը
- 2.Ավագ դպրոցի բացակայությունը
- 3.Մշակույթի տան և գրադարանի բացակայությունը
- 4.Ուժեղ սեյսմիկ գոտում գտնվելը
- 5.Կենտրոնացված կոյուղու բացակայությունը
- 6.Արտագաղթը
- 7.Գյուղատնտեսական արտադրանքի ստացման բարձր ինքնարժեքն ու իրացման դժվարությունները

### **Հնարավորությունները**

- 1.Աշխատուժի առկայություն
- 2.Ոռոգման ջրի պաշարի առկայություն
- 3.Տուրիստական հետաքրքրություն ներկայացնող վայրեր

### **Սպառնալիքներ**

- 1.Երաշտ
2. Կարկուտ
- 3.Գյուղատնտեսական մթերքների գների նվազում
- 4.Գյուղատնտեսական մթերքների արտահանման դժվարություն
- 5.Բնակչության աճի ցածր տեմպ

### **3. Նպատակների սահմանում և գործողությունների պլանավորում**

#### **3.1. Համայնքի զարգացման տեսլական**

Համայնքի զարգացման տեսլականն է՝

Ունենալ զարգացած և հզոր համայնք, որտեղ առկա են ձեռնարկություններ, և մարդիկ ապրում են արժանապատիվ կյանքով:

- Համայնքի ուժեղ կողմերի և միկրո-հնարավորությունների վրա հիմնված վեր հանել համայնքի խնդիրները, և խոչընդոտները հաղթահարելով՝ ապահովել կայուն, շարունակական զարգացում ու հզորացում:
- Հետևողականորեն բարեփոխումներ կատարելու միջոցով բարելավել համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական, մշակութային և հանգստի պայմանները, համայնքը դարձնել զարգացած, գեղեցիկ և բարեկարգ:
- Բարեփոխումներ կատարելով նախատեսվում է հասնել հետևյալ նպատակներին՝
- Գյուղացիներին ապահովել մաքուր խմելու ջրով,
- Զարգացնել բուսաբուծությունն ու անասնաբուծությունը,
- Ակտիվացնել բնակչության մշակութային կյանքը,
- Կազմակերպել համայնքաբնակների հանգիստը,
- Ապահովել բոլոր տեսակի տրանսպորտային միջոցների նորմալ և անվտանգ երթևեկությունը,
- Աղքատության շեմից ցածր գտնվող ընտանիքների թիվը նվազեցնել 10%-ով,
- Համայնքի սեփական տարեկան եկամուտները հասցնել 25%-ով աճի,
- Համայնքում գրանցված բնակիչների թվի աճը նախորդ տարվա համեմատ հասցնել 2%-ով աճի:

#### **3.2. Համայնքի զարգացման անմիջական նպատակներ**

- 1) Գործարար միջավայրը բարելավել և ձեռնարկատիրությունը խթանել:
- 2) Համայնքի գույքը կառավարել:

- 3) նախադպրոցական կրթությունը և արտադպրոցական դաստիարակությունը կազմակերպել:
- 4) Ակտիվ մշակութային և մարզական կյանքն ակտիվացնել՝ երիտասարդության ներգրավմամբ:
- 5) Բարելավել համայնքի բնակչության սոցիալական պաշտպանությունը:
- 6) Ապահովել ֆիզիկական կուլտուրայի և առողջ ապրելակերպի խրախուսումը:
- 7) Համայնքում բնակարանային շինարարությունը խթանել:
- 8) Ապահովել համայնքի բնակավայրերի կառուցապատումը, բարեկարգումը և կանաչապատումը: Կոմունալ տնտեսության աշխատանքներն ապահովել, ինչպես նաև համայնքային գերեզմանատան պահպանումը և գործունեության ապահովումը կազմակերպել,
- 9) Համայնքի հասարակական տրանսպորտի աշխատանքը կազմակերպել, համայնքային ճանապարհային ենթակառուցվածքների պահպանումը և շահագործումը կազմակերպել:
- 10) Աջակցել պետության պաշտպանության իրականացման հարցում:
- 11) Իրականացնել աղետների ռիսկերի նվազեցման և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության ու քաղաքացիական պաշտպանության միջոցառումները:
- 12) Գյուղատնտեսության զարգացումը խթանել:
- 13) Կազմակերպել համայնքում շրջակա միջավայրի պահպանությունը:
- 14) Համայնքում զբոսաշրջության զարգացումը խթանել:
- 15) Համայնքի երիտասարդության խնդիրների լուծմանն ուղղված ծրագրերի և միջոցառումների կազմակերպումն ապահովել:
- 16) Համայնքում ծնելիությունը և բազմազավակությունը խթանել:
- 17) Ապահովել համայնքում բնակչության առողջության պահպանման և բարելավման ծրագրերի իրականացումը, արդյունավետ և մատչելի բժշկական սպասարկման պայմանների ստեղծումը:



- 18) Համայնքային հասարակական կյանքին հաշմանդամների մասնակցությունը խթանել:
- 19) Համայնքում առկա ազգային և համամարդկային արժեքներին յուրաքանչյուրի ազատ հաղորդակցմանը նպաստել:
- 20) Բարեգործությունը խթանել՝ համայնքում մշակութային, կրթական, գիտական, առողջապահական, մարզական, սոցիալական և այլ հաստատությունների հիմնադրման, ֆինանսավորման, ինչպես նաև դրանց ֆինանսական անկախության ապահովման նպատակով:

#### **4. ՀԶԾ ֆինանսավորում**

ՀԶԾ-ում ընդգրկված ծրագրերը ֆինանսավորվելու են՝

- Համայնքի սեփական եկամուտներից,
- Ներքին պաշտոնական դրամաշնորհներից
- Արտաքին պաշտոնական դրամաշնորհներից,
- Բարեգործություն /նվիրատվություններից
- Այլ աղբյուրներից,

ՀԶԾ-ում ընդգրկված ծրագրերի իրականացման համար չկան առկա միջոցներ, նրանց համար անհրաժեշտ է գումար ապահովել:

#### **5. ՀՀԶԾ-ի մոնիթորինգը**

Իրականացվում է հարցումների և փաստերի ուսումնասիրության հիման վրա, որով գնահատվում է զարգացման ծրագրի անձնագրով նախատեսված ցուցանիշների իրական լինելը, ծրագրի իրականացման արդյունավետությունը, բնակչության սոցիալական վիճակի փոփոխությունը : Հսկվում է ծրագրի իրականացման ընթացքը:

## Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր

**«Մշակույթի տան կառուցում»**  
(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Ակտիվացնել համայնքի մշակութային և մարզական կայքը					
Ծրագրի անմիջական նպատակ	Մշակույթի տան շենքում ունենալ խաղասենյակ, գրադարան և հանդիսությունների սրահ					
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ			
		2016	2017	2018	2019	2020
0	1	0	0	0	0	
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1. Մշակույթի տան կառուցման նախագիծ ունենալը					
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ			
		2016	2017	2018	2019	2020
	0	1	0	0	0	0
	2. Խաղասենյակ, գրադարան և հանդիսությունների սրահ					
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ			
2016		2017	2018	2019	2020	2021
0	1	0	0	0	0	
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 1.1.Նախագծի պատվիրում 1.2. 2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 2.1.շենքի կառուցում 2.2.					
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ 10 մլն.դրամ Կապիտալ ծախսեր՝ 65 մլն.դրամ Ընդհանուր բյուջեն՝ 75 մլն.դրամ					
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Առկա է կիսակառույց շենք					
Ծրագրի հիմնական ռիսկերը	Ռիսկեր չկան					
Ծրագրի հիմնական շահառուները	Համայնքի բնակչություն, համայնք					
Ծրագրի սկիզբ և ավարտ	2017թ.-2017թ.					
Ծրագրի համառոտ նկարագրություն	Նախատեսվում է համայնքում առկա կիսակառույց շենքը դարձնել մշակույթի տուն, որում կլինեն գրադարան, խաղասենյակ և հանդիսությունների սրահ:					